



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 14-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 21-Ի «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 06-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009 թվականի ապրիլի 21-ի «Դատական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 06-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Հավելվածի 1-ին կետը նախատեսող պաշտոնի անձնագրի 1-ին բաժնի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի դրական եզրակացության հիման վրա» նախադասությունը փոխարինել «Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի ներկայացմամբ» նախադասությամբ:

1.2. Հավելվածի 10-ից և 14-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«10. Ֆինանսատնտեսական բաժնի ավագ մասնագետ N10.1-10.2

11. Համակարգչային սպասարկման ավագ մասնագետ N 11

12. Դատական պրակտիկայի ամփոփման բաժնի մասնագետ N 12

13. Անձնակազմի կառավարման և կազմակերպման բաժնի մասնագետ N 13

14. Ֆինանսատնտեսական բաժնի մասնագետ N 14»:

1.3. Հավելվածի 7-ից 14-րդ կետերը նախատեսող պաշտոնների անձնագրերի 6-րդ բաժնի ա) ենթակետում «կրթություն», բառից հետո նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«դատական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ դատական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական պաշտոններում, բացառությամբ ԼՂՀ համայնքի ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ»:

1.4. Հավելվածի 3-ից 6-րդ, 17-րդ և 18-րդ, 22-րդ և 23-րդ, 27-րդ և 28-րդ կետերը նախատեսող պաշտոնների անձնագրերի 6-րդ բաժնի ա) ենթակետում «հայեցողական» բառից հետո ավելացնել «պաշտոններում, բացառությամբ ԼՂՀ համայնքի ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների», նախադասությունը:

Նույն ենթակետից հանել «կամ մինչև 2011 թվականի հունվարի 1-ը երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» նախադասությունը:

1.5. Հավելվածի 5-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի 2-րդ բաժնի 5-րդ կետում «մասնագետը» բառը փոխարինել «մասնագետներից» մեկը բառերով.

Նույն բաժնի 6-րդ կետում «մասնագետի» բառը փոխարինել «մասնագետներից մեկի» բառերով:

1.6. Հավելվածի 7-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի 7-րդ բաժնի 11-րդ կետը ավելացնել եա) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«եա) իրականացնում է դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում նյութերի տեղադրման և սրբագրման աշխատանքները, ինչպես նաև ապահովում է կայքի պատշաճ աշխատանքը.»:

1.7. Հավելվածի 10-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի ծածկագրի «10» թիվը փոխարինել «12» թվով:

1.8. Հավելվածի 11-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի ծածկագրի «11» թիվը փոխարինել «13» թվով:

1.9. Հավելվածի 12-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրում՝

1.9.1. պաշտոնի անձնագիր ծածկագրի «12» թիվը փոխարինել «10.1» թվերով.

1.9.2. երկրորդ բաժնի 5-րդ կետում «պետը կամ մասնագետ /գանձապահը/» բառերը փոխարինել «աշխատակիցներից որևէ մեկը» բառերով.

1.9.3. նույն բաժնի 5.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Բաժնի ավագ մասնագետը Բաժնի աշխատակիցներից որևէ մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրան»:

1.9.4. 6-րդ բաժնի 10-րդ կետի ա) ենթակետի «բարձրագույն» բառից հետո ավելացնել «մասնագիտական» բառը:

1.10. Հավելվածի 13-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի ծածկագրում «13» թիվը փոխարինել «14» թվով.

1.10.1. պաշտոնի անձնագրում «բաժնի մասնագետ (գանձապահ)» բառերը՝ իր բոլոր հոլովաձևերով, փոխարինել «բաժնի մասնագետ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

1.10.2. երկրորդ բաժնի 5-րդ կետում «ավագ մասնագետը» բառերը փոխարինել «ավագ մասնագետներից մեկը» բառերով.

1.10.3 6-րդ կետում «ավագ մասնագետի» բառերը փոխարինել «ավագ մասնագետներից մեկի» բառերով:

1.11. Հավելվածի 14-րդ կետը նախատեսող պաշտոնի անձնագրի ծածկագրում «2» և «14» թվերը փոխարինել համապատասխանաբար «1» և «11» թվերով.

1.11.1. 1-ին բաժնի 1-ին կետում «սպասարկման» բառից հետո ավելացնել «ավագ» բառը, իսկ «2-րդ» բառը փոխարինել «1-ին» բառով.

1.11.2. 6-րդ բաժնի 10-րդ կետի գ) ենթակետի «աշխատելու» բառից հետո ավելացնել «զերազանց» բառը.

1.11.3. 7-րդ բաժնի 11-րդ կետը ավելացնել գա) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«գա) իրականացնում է դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի տեխնիկական սպասարկումը և անվտանգությանը ապահովումը»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ից:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԱՎԱԳՅԱՆ

28 դեկտեմբերի 2011թ.

ք. Ստեփանակերտ